ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23.13/[48388]-10
«Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի
կառավարման խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 10-ին ժամը 15:00-ին կայացած
նիստի

**քաղ. Երևան**

***Մասնակցում էին***

| | |
|---|---|
| Ա. Գևորգյան | ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար |
| Վ. Ներսիսյանց | ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական |
| Տ. Դավթյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Գ. Ալավերդյան | ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Հ. Բեգլարյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի առաջին տեղակալ |
| Մ. Թումասյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ |
| Ա. Անդրեասյան | ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ |
| Լ. Հունանյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական վարչության պետի տեղակալ |
| Շ. Հովսեփյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական վարչության առաջատար մասնագետ |
| Ա. Ռասսին | Հայաստանում ՀՄԿ-ի գրասենյակի տնօրեն |
| Ա. Հովսեփյան | «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն |
| Ն. Մարտիրոսյան | «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր իրավախորհրդատու |
| Տ. Քալանթարյան | «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի ոռոգման ծրագրի ղեկավար |
| Ռ. Խաչատրյան | «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ – Հայաստանե ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ |

| | |
|---|---|
| Պ. Շահինյան | «Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի գործադիր տնօրեն |
| Շ. Միքայելյան | «Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի ներկայացուցիչ |
| Վ. Ենգիբարյան | «Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի ներկայացուցիչ |
| Կ. Զադոյան | «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ |
| Վ. Ավանեսյան | «Ավագ Սոլյուշնսե» ՍՊԸ-ի տնօրեն |
| Մ. Գասպարյան | «Ավագ Սոլյուշնսե» ՍՊԸ-ի փոխտնօրեն |
| Ա. Կուրդովա | «Վիստաա պլյուսե» ՍՊԸ-ի իրավաբան |
| Ա. Օհանյան | թարգմանիչ |

***Բացակայում էին՝***

| | |
|---|---|
| Դ. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Ն. Երիցյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Մ. Վարդանյան | ՀՀ տրանսպորտի և կապի նախարար |
| Ա. Ոսկյանան | «Տավուշի զարգացմանե» ՀԿ-ի ներկայացուցիչ, ծրագրերի համակարգող |

1. ՀՄԿ-ին ներկայացվող 17-րդ հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում (տեղեկանքները կցվում են)

   ա. Հատկացման հայտ և Եռամյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ. Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
   գ. Աշխատանքային պլան,
   դ. Ամփոփ եռամյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ
   ե. Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան

---

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը** և նշեց, որ Հատկացումների 17-րդ հայտով «Հազարամյակի մարտահրավերներ հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ը նախատեսում է գալիք եռամյակի (հոկտեմբեր–դեկտեմբեր, 2010 թ.) համար ՀՄԿ-ից

ընդհանուր վճարային համակարգի միջոցով ստանալ ֆինանսավորում 18,513,863 ԱՄՆ-ի դոլարի չափով: Նախատեսված ծախսերի և ստացվելիք ֆինանսավորման տարբերությունը կֆինանսավորվի բանկային հաշվի մնացորդի հաշվին, որը, ըստ կանխատեսման, այս եռամսյակի վերջի դրությամբ կկազմի 190,373 ԱՄՆ-ի դոլար: Նշված մնացորդի մաս է կազմում «Քորթհիլե կորպորացիայի Հայաստանի մասնաճյուղից ստացված 99,990 ԱՄՆ-ի դոլար գումարը, որը կազմակերպությունը վճարել էր «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ին երրորդ կարգի ջրանցքների կառուցման մրցույթի հաղթող ճանաչվելուց հետո համապատասխան պայմանագիր ստորագրելուց հրաժարվելու պատճառով՝ համաձայն գործող գնումների ուղեցույցի պահանջների: Վերոհիշյալ գումարը ՀՄԿ-ի համաձայնությամբ առաջարկվում է օգտագործել երրորդ կարգի ջրանցքների կառուցման աշխատանքների ֆինանսավորման նպատակով:

Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի մասով նախատեսված ֆինանսավորումն ուղղվելու է մայր ջրանցքների, պոմպակայանների, Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնմանը, ինքնահոս համակարգերի և երրորդ կարգի ջրանցքների կառուցմանը: Մասնավորապես գալիք եռամսյակում նախատեսվում է պոմպակայանների վերկանգնման ծրագրի համար անհրաժեշտ պոմպերի էլեկտրական և մեխանիկական բաղադրիչների ներկրումը Հայաստան: Ինքնահոս համակարգերի մասով ակնկալվում է շինարարական աշխատանքների վաղաժամկետ ավարտ: Ինչպես միշտ գումարներ են նախատեսված նաև շինարարության վերահսկողության, բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման և վերահսկողության համար:

Ջրից դեպի շուկա բաղադրիչի մասով ծախսեր են նախատեսված ոռոգման կառավարման կառուցվածքային ամրապնդման խորհրդատուի համար: Պլանավորված են նաև ծախսեր ՀՀ ոռոգման ոլորտի ազգային քաղաքականության հայեցակարգից բխող և առաջնահերթ գերակայություն ունեցող միջոցառումների իրականացման ռազմավարության մշակման համար: ԿՖինանսավորվի ՋՕԸ-երում և Ջրառներում ԱՏՀ (GIS) համակարգի տվյալների բազաների ստեղծման, ինչպես նաև հաշվապահական հաշվառման և բյուջեների կազմման ծրագրերի ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Կշարունակվի ֆինասավորվել ԷՅՍԻԴԻԱՅ/ՎՕԿԱ կազմակերպության և Գյուղական ֆինանսավորման կառույց ՊՀ-ի գործունեությունը:

Ծրագրի կառավարում և վերահսկում ենթածրագրի ֆինանսավորումը, բացի պարբերական բնույթ կրող ծախսերից (անձնակազմի աշխատավարձ, գրասենյակային

ծախսեր, վճարում ֆինանսական գործակալին), ներառում է նաև ֆինասական աուդիտի դիմաց վճարման համար նախատեսված ծախսեր։

Նախատեսվում է նաև իրականացնել աշխատողների տարեկան կատարողականի գնահատում և այդ արդյունքների հիման վրա պարգևավճարների վճարում՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում։ Ընդ որում, համաձայն ֆինանսական հաշվետվողականության պլանում ամրագրված կարգի, պարգևավճարները կհաշվարկվեն ամսական աշխատավարձի 50, 75 կամ 100 տոկոսի չափով։ Դրանից բացի՝ նա նշեց, որ այն աշխատողները, որոնք վերջին մեկ տարվա ընթացքում ստացել են նկատողություն, չեն կարող հավակնել պարգևավճարների։

Ընթացիկ եռամսյակի վերջի դրությամբ ծրագրի փաստացի և կանխատեսվող (սեպտեմբեր ամսվա) ծախսերի ընդհանուր գումարը կկազմի 86,512,275 ԱՄՆ-ի դոլար։

Հատկացման հայտը «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից հաստատվելուց հետո կներկայացվի կառավարման խորհրդի նախագահին՝ ստորագրությամբ վավերացնելու համար, որից հետո կուղարկվի ՀՄԿ՝ հավանություն ստանալու և համապատասխան ֆինանսավորման իրականացման համար։

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 17-րդ Հատկացման հայտի և դրան կից ներկայացվող փաստաթղթերը։

2. «ՀՄՀ–Հայաստանե ծրագրի «Ոռոգման կառավարման կառույցների ինստիտուցիոնալ հզորացումե բաղադրիչի շրջանակներում մշակված «Ոռոգման ոլորտի ազգային քաղաքականությանե հայեցակարգի հիման վրա մշակված «Ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությունը հաստատելու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասինե ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

---

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը** և նշեց, որ 2008 թվականի օգոստոսի 25-ին «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի և «Եվրոքոնսալթ Մոթթ ՄակԴոնալդե և «Վիստաա Պլյուսե կոնսորցիումի միջև ստորագրված պայմանագրի շրջանակներում մշակվել է «Ոռոգման ոլորտի ազգային քաղաքականությանե հայեցակարգ։

Հատկացումների համաձայնագրի ժամանակացույց 1-ում, որպես «ՀՄՀ-Հայաստանե ծրագրի նախապայման, սահմանված է, որ ՀՀ կառավարությունը կառուցվածքային ամրապնդման խորհրդատուի կողմից կազմված նախագծերի հիման վրա մշակելու և ընդունելու Ռոզման և դրենաժի ազգային քաղաքականությունը և ռազմավարության վերջնական տարբերակը, նոր օրենսդրություն և (կամ) փոփոխելու է գործող օրենսդրությունը՝ ոռոգման քաղաքականության և ռազմավարության կիրառման համար, որոնք ընդունելի են ՀՄԿ-ի համար: Ընդ որում, վերջինս ենթակա է կատարման մինչև 2010 թվականի սեպտեմբեր ամիսը:

Ոռոգման ոլորտի ազգային քաղաքականության վերաբերյալ հայեցակարգը քննարկվել և հաստատվել է 2009 թվականի դեկտեմբերի 16-ին «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի կողմից: Այնուհետև հայեցակարգից առանձնացվել էին հինգ հիմնական կետեր, որոնց վերաբերյալ պարզաբանումներից հետո խորհրդատու կազմակերպությունն աշխատանքներ է կատարել դրանց իրականացման ուղղությամբ և ներկայացրել համապատասխան առաջարկությունների փաթեթ: Փաթեթը ներկայացվել է ծանոթացմանն ու քննարկմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողով:

Արդյունքում մշակվել է «Ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարությունը հաստատելու և ռազմավարությունից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովելու գործողությունների մասինե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ, որը համապատասխան հավանությունից հետո պաշտոնապես կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանն ու հաստատմանը:

Ինչ վերաբերում է ՀԲ-ի ներկայացուցիչների հետ աշխատանքների կոորդինացմանը, նա նշեց, որ փաթեթի վերջնական տարբերակը դեռևս չի համաձեյնեցվել , սակայն մշակման փուլում կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ:

**Հայաստանում ՀՄԿ-ի գրասենյակի տնօրեն Ա. Ռասսինը** հույս հայտնեց, որ կատարված աշխատանքները կոորդինացված են եղել նաև ՀԲ-ի ներկայացուցիչների հետ:

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հավանություն տալ «ՀՄՀ–Հայաստանե ծրագրի «Ռոզման կառավարման կառույցների ինստիտուցիոնալ հզորացումե բաղադրիչի շրջանակներում և Ռոզման ոլորտի ազգային քաղաքականության հայեցակարգի հիման վրա մշակված Ջրօգտագործողների ընկերություններին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարության նախագծին.

2) հանձնարարել «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին Ջրօգտագործողների ընկերություն-ներին պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարության և դրանից բխող առանձին միջոցառումների իրականացումն ապահովող գործողությունների փաթեթի վերջնական տարբերակը ներկայացնել ԱՄՀ (քանի որ այն իր մեջ ներառում է նաև հարկային օրենսդրության փոփոխություններ) և ՀԲ:

3. «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ-Հայաստանե ծրագրի Ռոզվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում առկա՝ չնախատեսված ծախսերի ֆոնդի բաշխման առաջարկվող ուղղությունների քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է)

---

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե Հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը** և նշեց, որ «ՀՄՀ-Հայաստանե ծրագրի կառավարման խորհուրդը նախկին նիստերի ընթացքում անդրադարձել է Ռոզման ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում առկա 11 շի-նարարական պայմանագրերի դիմաց չնախատեսված ծախսերի համար ընդհանուր գումարի 15 տոկոսի չափով ֆոնդի օգտագործման հարցին: Ներկայումս, գործող շինարարական պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 99,078,323.62 ԱՄՆ-ի դոլար, որոնց չնախատեսված ծախսերի համար առանձնացվել է 14,861,748 ԱՄՆ-ի դոլար: Մինչ օրս, փոփոխման պատվերների միջոցով լրացուցիչ շինարարական աշխատանքների և ծառա-յությունների իրականացման նպատակով հատկացվել է 5,337,585 ԱՄՆ-ի դոլար: Այժմ առկա է 9,524,163 ԱՄՆ-ի դոլար, սակայն ակնկալվում է առաջիկա մեկ տարվա ընթացքում օգտագործել նշված գումարի մի մասը՝ նախապես նախագծերում չնախատեսված աշխատանքներ իրականացնելու համար: Դրանից բացի՝ ազատված գումարները,

հնարավորության և ՀՄԿ-ի համաձայնության դեպքում, արագ և արդյունավետ տեղաբախշելու նպատակով «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ը մշակել է առավել առաջնահերթություն ունեցող աշխատանքների վերաբերյալ վերլուծություն:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում առկա՝ չնախատեսված ծախսերի ֆոնդի բաշխման առաջարկվող ուղղությունները:

4. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի փակման պլանի վերջնական տարբերակի քննարկում և հաստատում (տեղեկանքը և ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակման պլանը կցվում են)

---

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը** և նշեց, որ ի կատարումն 2010 թվականի հուլիսի 13-ին կայացած «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստի ընթացքում ընդունված որոշման՝ «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի կողմից լրամշակվել է «ՀՄՀ-Հայաստանե ծրագրի փակման պլանը: Այսպիսով,

1) «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ը ծրագրի փակման ժամկետից հետո կլուծարվի, իսկ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնե ԾԻԳ-ը հանդես կգա որպես «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի իրավահաջորդ և պատասխանատու կլինի ծրագրի այն մասերի իրականացման և վերահսկման համար, որոնք կշարունակվեն ծրագրի փակման ժամկետի ավարտից հետո.

2) ծրագրի իրականացման արդյունքում կառուցված և վերականգնված ոռոգման ենթակառուցվածքները շինարարական աշխատանքների ավարտից հետո կփոխանցվեն համապատասխան շահագործող կառույցներին: «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ը նրանց կփոխանցի նաև տվյալ ենթակառուցվածքին առնչվող ամբողջ տեխնիկական փաստաթղթերը՝ նախագծեր, հաշվետվություններ, կատարողական ակտեր, շահագործման ձեռնարկներ և այլն.

3) շինարարական աշխատանքների ավարտից հետո «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ը կապալառուներին կվճարի թերությունների վերացման համար պահված գումարները՝

կապալառուների կողմից ներկայացված բանկային երաշխիքների դիմաց: Կատարված շինարարական աշխատանքների նկատմամբ 365 օր տևողությամբ թերությունների վերացման ժամկետում վերահսկողությունը կիրականացվի ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնե ԾԻԳ-ի կողմից:

Այնուհետև նա նշեց, որ ՀՄԿ-ի հետ հանդիպումների ընթացքում քննարկվել էր դոնորների այն հետաքրքրվածության հարցը, որը վերաբերում էր ՀՀ կառավարության կողմից ծրագրի արդյունքների գնահատման մեխանիզմներին: Ընդ որում, այն կարևորվում էր հատկապես այն պարագայում, երբ ՀՀ կառավարության կողմից կայացվի նոր որոշում՝ դիմելու ՀՄԿ-ի 2-րդ ծրագրին (ՀՀ կառավարությունը դեռևս չի դիմել): Ուստի, նման դեպքում ՀՀ կառավարությունը պետք է արդեն իսկ ունենա նախորդ ծրագրի ընթացքում կատարված աշխատանքների գնահատականը: Դրանից բացի՝ նա նշեց, որ ՀՄԿ-ի կողմից սահմանված չափանիշների համապատասխանությունը որոշվում է (գնահատվում է) միջազգային անկախ ընկերությունների՝ հիմնականում «Freedom houseե կազմակերպության կողմից:

ՀՄԿ-ի կողմից սահմանված չափանիշներին Հայաստանի համապատասխանության ցուցանիշի մասով **«Հայաստանի եվրոպական շարժումե ՀԿ-ի ներկայացուցիչ Վ. Ենգիբարյանը** հայտնեց իր մտավախությունը՝ կապված ՀՀ արդարադատության նախարարության նոր տեսչության ստեղծման հետ: Ըստ նրա ստեղծվելիք տեսչությունը պետք է վերահսկի ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը:

**ՀՀ ֆինանսների նախարար Տ. Դավթյանը** նշեց, որ մեկշաբաթյա ժամկետում նախատեսվում է Մոնիթորինգի և գնահատման ենթածրագրի եռակողմ քննարկում (ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե և «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ): Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ առկա են որոշակի հարցեր (օրինակ՝ մոնիթորինգի իրականացման համար կոնկրետ մասնագետների առկայություն), որոնք ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոնե ԾԻԳ-ը չի կարող իրականացնել: Այդ իսկ պատճառով առաջարկեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ–Հայաստանե ծրագրի փակման պլանի վերջնական տարբերակի քննարկում և հաստատում (տեղեկանքը և ՀՄՀ-Հայաստան ծրագրի փակման պլանը հաստատել որոշակի վերապահումներով՝ պայմանավորված նախատեսվող քննարկումների արդյունքներով:

**ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը** նշեց, որ ՀՄԿ-ի կողմից սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում պետք է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ՀՄԿ-ի 2-րդ ծրագրին դիմելու ուղղությամբ։

Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարության նոր տեսչության գործառույթներին, նա նշեց, որ այն պետք է իրականացնի օրենսդրության շրջանակներում իրեն վերապահված լիազորություններ (հիմնականում ՀԿ-ների գործունեության հրապարակայնության նկատմամբ հսկողություն՝ տարեկան հաշվետվությունների միջոցով)։ Ընդ որում, այն իր մեջ պարունակում է հակակոռուպցիոն տարրեր։

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) որոշակի վերապահումներով հաստատել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ծրագրի փակման պլանի վերջնական տարբերակը.

2) հանձնարարել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանին ՀՀ ֆինանսների նախարար Տ. Դավթյանի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ Ա. Անդրեասյանի հետ համատեղ քննարկել Մոնիթորինգի և գնահատման ենթածրագրի հետ կապված հարցերը.

3) առաջարկել «Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդե ՀԿ-ի գործադիր տնօրեն Պ. Շահինյանին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել առաջարկություններ ՀԿ-ների մասով ԵՄ-ի չափանիշներին չհամապատասխանող օրենսդրական դրույթների վերաբերյալ։

5. «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի բնապահպանական և սոցիալական ազդեցության ղեկավարի թափուր պաշտոնի համալրման համար անցկացված մրցույթի արդյունքների քննարկում և հաստատում (տեղեկանքը, արձանագրությունը, թեկնածուների ինքնակենսագրությունը և ուղեկցող նամակները կցվում են)

---

(Ա. Հովսեփյան, Տ. Սարգսյան)

**Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Ա. Հովսեփյանը** և նշեց, որ համաձայն 2006 թվականի սեպտեմբերի 29-ին ստորագրված Կառավարման համաձայնագրի 1.6 c (x) բաժնի պահանջների կառավարման գրասենյակի ղեկավարների աշխատանքի ընդունումը և

աշխատանքից ազատումը, ինչպես նաև բոլոր այն աշխատողների որոնց համախառն ամսական վարձատրությունը գերազանցում է 2000 ԱՄՆ-ի դոլարը, աշխատանքի ընդունումը և աշխատանքից ազատումը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրերն ու դրանցում կատարվող փոփոխությունները պետք է նախապես ներկայացվեն կառավարման խորհրդի հաստատմանը: Այսպիսով, 2010 թվականի հունիս ամսին «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության ղեկավարի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի արդյունքներով առավելագույն գնահատականներ են հավաքել Արմեն Բոդոյանը և Արտակ Տեր-Թորոսյանը:

Այնուհետև «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության ղեկավարի թեկնածուները ներկայացրեցին իրենց ծրագրերը և պատասխանեցին առաջադրված հարցերին:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավերե հիմնադրամ-Հայաստանե ՊՈԱԿ-ի բնապահպանական և սոցիալական ազդեցության ղեկավարի թափուր պաշտոնի համալրման համար անցկացված մրցույթի արդյունքները և «ՀՄՀ-Հայաստանե ՊՈԱԿ-ի բնապահպանության և սոցիալական ազդեցության ղեկավարի թեկնածուներից նախապատվությունը տալ Արմեն Բոդոյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ